

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ
ՈւՍՈւՄՆԱՌՈւԹՅԱՆ ՄԱՍԻՆ

.....թ.

Երևան

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

«Հայաստանի ազգային ազրարային համալսարան» հիմնադրամը, այսուհետ նաև՝ Հիմնադրամ, կամ Համալսարան, կամ ՀԱԱՀ, ի դեմս ռեկտոր Վարդան Ուսուտյանի, ով գործում է Հիմնադրամի կանոնադրության համաձայն՝ մի կողմից և _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրսի ուսանող _____ այսուհետ՝ Ուսանող, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ, Պայմանագիր, հետևյալի մասին.

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1. Պայմանագրի կնքման իրավական հիմքերն են ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Հիմնադրամի կանոնադրությունը, Համալսարանի ներքին կարգապահական կանոնները և Համալսարանի ու Ուսանողի հարաբերությունները և ուսումնական գործընթացը կարգավորող Ներքին իրավական ակտերը:

2.2. Ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնած և Համալսարանում կցագրված դիմորդների հետ Պայմանագիրը կնքվում է առկա կրթությամբ դիմորդների կողմից մինչև սեպտեմբերի 15-ը, հետակա կրթությամբ դիմորդների կողմից առաջին կուրսի ուսումնական պարապմունքները սկսելուց ոչ պակաս մեկ շաբաթ առաջ՝ ուսման վարձի առաջին կիսամյակի գումարը վճարելու դեպքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Պայմանագրի առարկան Ուսանողի՝ _____ ձևով,

/առկա, հեռակա/ ընդգծել

_____ կրթական ծրագրով

/միջին մասնագիտական, բակալավրիատ, մագիստրատուրա/ ընդգծել

ուսումնառություն իրականացնելու կարգն ու պայմաններն են:

3.2. Ուսանողի ուսումնառության ժամկետը _____ տարի _____ ամիս է:

4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

4.1. Գործող ուսումնական պլաններին ու չափորոշիչներին համապատասխան իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել և իրականացնել Ուսանողի ուսումնական գործընթացը և ատեստավորումը:

4.2. Օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Ներքին կարգապահական կանոններով և Ներքին իրավական այլ ակտերով սահմանված պարտավորությունները չկատարելու, դրանք ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու, ինչպես նաև ակադեմիական անբավարար առաջադիմության դեպքերում Ուսանողի նկատմամբ կիրառել կարգապահական պատասխանատվության միջոցներ, այդ թվում հեռացնել Համալսարանից:

4.3. Պայմանագրով նախատեսված կարգով, չափով և ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում լուծել Պայմանագիրը և Ուսանողին հեռացնել Համալսարանից:

5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

5.1. Կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ սահմանված կարգով հաստատված մասնագիտական կրթական ծրագրի համաձայն:

5.2. Ստեղծել մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացը պատշաճ ապահովող հնարավոր բոլոր պայմանները:

5.3. Ուսանողին ծանոթացնել Պայմանագրի 2-րդ կետով սահմանված՝ Պայմանագրի կնքման համար հիմք հանդիսացած իրավական ակտերին:

5.4. Պայմանագրի 8-րդ կետով սահմանված ծանուցումներն իրականացնել նաև էլեկտրոնային ազդարարման և ծանուցման միջոցներով:

5.5. Ուսումնառությունն ավարտելու և ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում Ուսանողին շնորհել ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ:

6. ՈւՍՈՒՄՆԱՌՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

6.1. Ուսումնական ծրագրերի շրջանակում մասնակցել Համալսարանի ուսումնագիտական և հետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին և այլ միջոցառումներին:

- 6.2. Մահմանված կարգով օգտվել Համալսարանի հանրակացարանից, հանգստյան տնից, գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական և այլ ստորաբաժանումների ծառայություններից:
- 6.3. Մահմանված կարգով մասնակցել Համալսարանի կառավարման մարմինների աշխատանքներին:
- 6.4. Ծանոթանալ Համալսարանի կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոններին և այլ փաստաթղթերին:
- 6.5. Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար սահմանված կարգով ստանալ ոչ նյութական և/կամ նյութական խրախուսանք:
- 6.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով ուսանողական նպաստի ձևով ստանալ ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:
- 6.7. Գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության և պատշաճ վարքագիծ դրսևորելու համար ՀՀ Կառավարություն կողմից սահմանված կարգով և չափով ստանալ Պետական կրթաթոշակ:

7. ՈւՄՄԱՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է

- 7.1. Սահմանված կարգով և ժամկետում կատարել ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով (մոդուլներով) սահմանված բոլոր առաջադրանքները, հաճախել դասերին և հանձնել ստուգարքները և քննությունները:
- 7.2. Ուսման ընթացքում անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողը մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը պետք է հանձնի քննությունների առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ կատարելով յուրաքանչյուր կրեդիտին համարժեք վճարում:
- 7.3. Պայմանագրի 7.2. կետով սահմանված քննություններն ուսանողին թույլատրել հանձնելու ոչ ավել, քան 2 (երկու) անգամ:
- 7.4. Պայմանագրի 7.2. կետով սահմանված պահանջը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողներին չի վերաբերվում:
- 7.5. Լինել շրջահայաց, Համալսարանի ինտերնետային պաշտոնական կայք-էջի միջոցով ծանոթանալ Պայմանագրի կնքման համար հիմք հաղիսացած իրավական ակտերին, այդ թվում Համալսարանի և Ուսանողների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերին, դրանցում կատարվող փոփոխություններին, Համալսարանի ծանուցումներին, Էջիկայի (բարեկարգության) կանոններին և կատարել ու պահպանել դրանց պահանջները:
- 7.6. Մահմանված կարգով, չափով և ժամկետում վճարել ուսման վարձը:
- 7.7. Պահպանել Համալսարանի կանոնադրությամբ և Ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները:
- 7.8. Պահպանել ակադեմիական բարեկարգության սկզբունքները և կանոնները, հարգալից վերաբերվել բոլոր անձանց:
- 7.9. Խնամքով վերաբերվել Հիմնադրամի, այլ ուսանողների, Հիմնադրամի աշխատողների և այլ անձանց գույքին:
- 7.10. Համալսարանում չաղվել, պահպանել անդորրը, չաղտոտել, պահպանել տարածքների մաքրությունը, Համալսարանում չծխել և ուսումնական գործընթացի հետ անհամատեղելի արարքներ չկատարել:
- 7.11. Լինել հետևողական, իրավական որևէ հիմքով ուսման վարձի փոխհատուցում ստանալու, ինչպես նաև ուսումնառության դադարեցումը ձևակերպելու համար Համալսարանի ղեկավարությանը դիմել սահմանված ժամկետի և կարգի պահպանմամբ:
- 7.12. Պայմանագրի 7.11. կետի պահանջները չկատարելու բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները կրում է Ուսանողը:

8. ՈւՄՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 8.1. Ուսանողն ընդունվում է _____ համակարգ:
վճարովի / անվճար
- 8.2. Ուսանողն ուսման ընթացքում կարող է տեղափոխվել վճարովի/անվճար համակարգ Պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 8.3. Վճարովի համակարգում սովորող Ուսանողի ուսման տարեկան վարձը սահմանվում է _____ դրամ:
- 8.4. Ուսումնառության ընթացքում Ուսանողը կարող է դիմել ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման համար:
- 8.5. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցման ձևակերպումը և հաշվարկները կատարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.6. Վճարովի համակարգում ընդունված կամ ուսումնառության ընթացքում օրենսդրությամբ սահմանված հիմքերով վճարովի համակարգ տեղափոխված Ուսանողի համար սահմանված ուսման վարձի չափը հաստատուն է ուսանողի տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար:
- 8.7. Պայմանագրի 8.5. կետով սահմանված կարգը չի պահպանվում ուսանողի նախաձեռնությամբ տեղափոխության (շարժունության), ինչպես նաև ուսանողի մեղքով ուսումնառության դադարեցման դեպքերում:
- 8.8. Համալսարանից հեռացված (ազատված), այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնված ուսանողներն ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետում:
- 8.9. Համալսարանից հեռացված (ազատված) ուսանողի ուսանողական իրավունքները վերականգնվում են ուսման նախորդ ժամանակահատվածում Ուսանողի՝ Համալսարանի հանդեպ ունեցած դրամական պարտավորությունները կատարելու դեպքում:
- 8.10. Ուսանողն ուսման վարձը կարող է վճարել ամսական, կիսամյակային կամ տարեկան վճարմամբ կամ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով:

- 8.11. Ուսման վարձը յուրաքանչյուր ամիս վճարելու դեպքում վճարումը կատարվում է մինչև տվյալ ամսվա 05-ը (հինգը):
- 8.12. Ամսական ուսման վճարի չափը որոշվում է տվյալ տարվա ուսման վարձի գումարը ուսումնական տարվա սահմանված 10 (տասը) ամիսների թվի վրա հավասարաչափ բաժանելու միջոցով:
- 8.13. Կիսամյակի ուսման վճարի չափը որոշվում է տարվա ուսման վճարը կիսամյակների թվին բաժանելու միջոցով:
- 8.14. Ուսման վարձը կիսամյակներով վճարելու դեպքում առկա ուսուցման համակարգի Ուսանողներն առաջին կիսամյակում տարեկան ուսման վարձի 50%-ը վճարում են մինչև սեպտեմբերի 15-ը, երկրորդ կիսամյակում տարեկան ուսման վարձի մնացած 50%-ը վճարում են մինչև փետրվարի 15-ը:
- 8.15. Հեռակա ուսուցման համակարգի Ուսանողներն ուսման վարձը վճարում են ուսումնական պարապմունքները սկսելուց ոչ պակաս մեկ շաբաթ առաջ:
- 8.16. Առաջին կուրսի առաջին ուսումնական կիսամյակի համար սահմանված ժամկետում՝ մինչև սեպտեմբերի 15-ը, ուսման վարձը չվճարելու դեպքում ուսանողը չի հրամանագրվում և Պայմանագիրը չի կնքվում:
- 8.17. Հաջորդ ուսումնական կիսամյակներում՝ մինչև փետրվարի 15-ը, ուսման վարձը չվճարելու դեպքում ուսանողը ենթակա է հեռացման:
- 8.18. Ուսման վարձը վճարվում է անկանխիկ՝ Համալսարանի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 8.19. Ուսանողը պարտավոր է վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել համապատասխան դեկանատ:
- 8.20. Ուսանողի նախաձեռնությամբ կամ մեղքով Պայմանագիրը լուծվելու դեպքում տվյալ ամսվա, կիսամյակի և տարվա վճարված ուսման վճարը չի վերադարձվում:
- 8.21. Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրով և ուսումնական ծրագրով սահմանված դասընթացներին և ուսումնական այլ պարապմունքներին ուսանողի անհարգելի բացակայությունը բացակա ժամանակահատվածի համար ուսման վարձը չհաշվարկվելու և չգանձելու համար հիմք չի հանդիսանում:

9. ՊՍՅՄԱՆԱԳՐԻ ՈւԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ

- 9.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև տվյալ կրթական ծրագրի ավարտը, եթե ուսանողն ուսման վարձի պարտք չի ունենում:
- 9.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի համաձայնությամբ, Կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.3. Ուսանողի ուսման վարձի պարտք ունենալու դեպքում վճարման պարտավորությունների մասով Պայմանագրի գործողությունը շարունակվում է մինչև ուսանողի կողմից ամբողջ պարտավորության կատարելը:

10. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՅԹՆԵՐ

- 10.1. Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում ծագած վեճերը բանակցությունների միջոցով չլուծվելու դեպքում լուծվում են դատական կարգով՝ Համալսարանի գտնվելու վայրի դատարանի ընդդատությամբ՝ անկախ Համալսարանի դատավարական կարգավիճակից:
- 10.2. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
- 10.3. Կողմերը համաձայնվեցին, որ Պայմանագրի շրջանակում ցանկացած ծանուցում կիրականացնեն Պայմանագրում գրված իրենց էլեկտրոնային հասցեներով, ընդունում են էլեկտրոնային եղանակով ծանուցման պատշաճ լինելը և խոստանում են էլեկտրոնային ծանուցումների պատշաճությունը երբևէ չվիճարկել:
- 10.4. Կողմերը համաձայնվեցին, որ էլեկտրոնային հասցեներով ծանուցումների իրականացումը պարտադիր է, եթե նույնիսկ Կողմերը էլեկտրոնային հասցեներով ծանուցումներին զուգահեռ ծանուցումներն իրականացնեն նաև ծանուցման այլ եղանակներով:
- 10.5. Կողմերը պարտավորվում են Պայմանագրում ներկայացված հասցեների փոփոխության մասին անհապաղ հայտնել մյուս Կողմին:
- 10.6. Հասցեների փոփոխության դեպքում Համալսարանը Ուսանողին ծանուցում է պաշտոնական կայք-էջում ազդարարման միջոցով:
- 10.7. Հասցեների փոփոխության դեպքում Ուսանողը՝ Համալսարանին տեղեկացնում է Համալսարանի էլեկտրոնային հասցեով ծանուցելու միջոցով:
- 10.8. Ուսանողը կրում է հասցեի փոփոխության մասին չհայտնելու, ինչպես նաև իր կողմից նշված էլեկտրոնային հասցեի որևէ պատճառով անհասանելի լինելու դեպքում տվյալ հասցեով ծանուցումները չստանալու բոլոր ռիսկերն ու բացասական հետևանքները:
- 10.9. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) հավասարազոր օրինակից, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Ուսանողին (ներկայացուցչին), իսկ մյուս օրինակը՝ Համալսարանին:
- 10.10. Պայմանագրի օրինակների միջև հակասության դեպքում հիմք է ընդունվում՝ նախապատվությունը տրվում է Համալսարանում պահվող օրինակին:
- 10.11. Ուսանողը կարգաց Պայմանագիրը և հայտարարեց, որ ինքը ծանոթացել է Պայմանագրին, Համալսարանի կանոնադրությանը, Ներքին կարգապահական կանոններին, ուսումնական գործընթացը կարգավորող իրավական ակտերին,

համաձայն է Համալսարանի հետ հարաբերություններում գործել նշված իրավական ակտերով և կատարել ու պահպանել այդ իրավական ակտերի պահանջները, որը հաստատում է նաև Պայմանագիրն ստորագրելով:

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Ռեկտոր Վարդան Ռուսուտյան

ՈւՍԱՆՈՂ

ազգանուն, անուն, հայրանուն

ստորագրություն և կնիք

ստորագրություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տեղյան 74

անձը հաստատող փաստաթուղթ
(անձնագրի թիվը, երբ և ում կողմից է տրված)

Արդշինքանկ ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000

հաշվառման հասցե

Հայրիզնեսքանկ ՓԲԸ
Հ/Հ 11500697984900

բնակության վայրի հասցե

ԱԿԲԱ բանկ ՓԲԸ
Հ/Հ 220003320177000

Էլեկտրոնային հասցե՝
info@anau.am

Էլեկտրոնային հասցե՝

Էրացվում է այն դեպքում, երբ Ուսանողն անչափահաս է և գործում է մինչև Ուսանողի չափահաս դառնալը:

Ես՝ _____, սույնով լիազորում եմ իմ _____

_____ ին՝ Պայմանագրի շրջանակներում գործելու ի շահ ինձ՝ մասնավորապես ներկայացնելու և

ստանալու ծանուցումներ, փաստաթղթեր, կատարելու վճարումներ:

Ես՝ _____, սույնով համաձայնում եմ Պայմանագրի շրջանակներում

հանդես գալու և գործելու իմ _____ ի անունից և ի շահ նրա:

ազգանուն, անուն, հայրանուն

ստորագրություն

անձը հաստատող փաստաթուղթ
(թիվը, երբ և ում կողմից է տրված)

հաշվառման հասցե

բնակության վայրի հասցե